Ալեքսանդր Ծատուրյան

Կյանք

Ո՛չ, ատելի չես, դու, կյա՛նք վշտալից,
Երբ քո խռովահույզ, բազմահոգ գրկում
Տանջելով մարդուն նաև կարեկից,
Անկեղծ ընկեր ես նորան պարգևում:

Ծանր չէ՛ քո խաչն, երբ մենք կորացած
Այդ խաչի տակին՝ խուլ հառաչելիս,
Ունենք մտերիմ, որ մեզ համազգաց,
Մեզ հետ խնդում է և մեզ հետ լալիս…

Երբ գիտենք, որ կա գոյության կովում
Մեզ սիրող մի սիրտ անձնուրաց ընկեր,
Որ միշտ պատրաստ է տանջանքի ժամում
Յուր սիրով սրբել մեր արտասուքներ:

Եվ որպե՜ս անհագ, որպե՜ս համարձակ
Հառա՜ջ, միշտ հառա՜ջ ձգտում է հոգին,
Երբ կյանքում, որպես հուսատու հրեշտակ,
Ընկերն ընկերին սեղմում է կրծքին:

Այնտեղ, մըտերիմ սիրառատ գրկում
Եվ փուշն է ծաղիկ, և՛ լացը ծիծաղ.
Այնտեղ ձրմեռն է գարնան պես ժպտում,

Այնտեղ և մահվան համբույրն է խաղաղ…

Ո՛չ. ատելի չես, ո՛վ կյա՛նք վշտալից,
Երբ քո խռովահույզ, անվերջ փոթորկում
Տանջելով մարդուն դու և կարեկից,
Անկեղծ ընկեր ես նորան պարգևում:

1892